

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

«ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ,  
ԵԿԵՂԵՑԻ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴ»  
(Թիւ 4)

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ԿԱՐՃ  
ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

ԱՆԹԻԼԻԱՍ  
2026

ՀՐԱՄԱՆԱԻ  
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա.  
ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ  
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ  
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ

ԿՐՕՆԱԿԱՆ ԵՒ  
ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ  
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ  
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

## ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ԿԱՐՃ ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Այդ օրերուն վայ է եկեր յիներուն» (Մտ 24.19):

Յոյնները՝ մեղքով յի, այլ խօսքով՝ մեղքով լեցուն մարդիկն են, ուրիշներուն հանդէպ ատելութեամբ լեցուն մարդիկն են, աշխարհի սիրով յղացածներն են:

2) «Աղօթեցէք որ ձեր փախուստը ձմեռ ատեն չպատահի» (Մտ 24.20):

Ձմեռը կը ներկայացնէ իրենց հաւատքին մէջ պաղած մարդիկը:

3) «Անգղները կը հաւաքուին  
հոն՝ ուր դիակ կայ» (Մտ 24.28):

Անգղները հաւատացեալներն են, իսկ դիակը Քրիստոսն է, որ մեր փրկութեան համար դիակ դարձաւ խաչին վրայ: Ինչպէս անգղները դիակի շուրջ կը հաւաքուին եւ անով կը կերակրուին, այնպէս ալ, հաւատացեալներս պէտք է հաւաքուինք մեզի համար դիակ դարձած ու յարութիւն առած Քրիստոսի շուրջ, եւ անով կշտանանք: Խօսքը նաեւ կը վերաբերի Տիրոջ երկրորդ գալուստէն ետք՝ իր շուրջ մեր հաւաքուելուն ու իրմով կշտանալուն:

4) «Երանի՛ հոգիով աղքատներուն...» (Մտ 5.3):

ա) Հոգիով աղքատները անոնք են՝ որոնք կը զգան եւ կը գիտակցին թէ իրենք Աստուծոյ կարիքը ունին: Ինչպէս նիւթապէս աղքատը կը զգայ թէ ինք նիւթականի պէտք ունի որպէսզի կարենայ ապրիլ, այնպէս ալ, հոգիով աղքատը՝ կը գիտակցի թէ ինք պէտք ունի Աստուծոյ, եւ թէ առանց Աստուծոյ չի կրնար ապրիլ:

բ) Հոգիով աղքատները նաեւ անոնք են՝ որոնց սիրտն ու հոգին աղքատացած, այլ խօսքով՝ մերկացած են աշխարհի սէրէն:

5) «Եկայ կրակ ձգելու երկրի վրայ եւ որքա՛ն կ'ուզէի որ արդէն իսկ բռնկած ըլլար» (Դկ 12.49):

Կրակը Յիսուսի սերն է, որ ան երկրի վրայ ձգեց: «Հաւատով խոստովանիմ»ին մէջ, Ներսէս Շնորհալին կ'ըսէ. *«Չհուր սիրոյ քո գորարկեր յերկիր»*, այսինքն՝ *«սիրոյդ կրակը որ երկրի վրայ ձգեցիր, նետեցիր»*: Յիսուսի սերը բունն ու զօրեղ է կրակի նման. երբ մուտք գործէ սրտէ մը ներս՝ այդ սիրտը Աստուծոյ ու մարդուն սիրով կը բռնկի. *«Եւ որքա՛ն կ'ուզէի որ արդէն իսկ բռնկած ըլլար»*:

6) Ի՞նչ կը խորհրդանշեն մոզերուն կողմէ Յիսուս մանուկին ընծայուած ոսկին, կնդրուկը եւ զմուտը:

Ոսկին կը խորհրդանշէ թագաւորութիւն, եւ ուստի՝ ցոյց կու տայ թէ ծնեալ մանուկ Յիսուսը թագաւոր է: Կնդրուկը կը խորհրդանշէ քահանայութիւն, եւ ուստի՝ ցոյց կու տայ թէ Յիսուս ծնաւ մեր մեղքերը քաւող Քահանայապետը ըլլալու: Չմուտը կը խորհրդանշէ մահ (հրեաներ իրենց մեռելները կը զմոսէին), եւ ուստի՝ ցոյց կու տայ թէ Յիսուս ծնաւ մեռնելու մեր փրկութեան համար:

7) «Աղօթեցէք որ ձեր փախուստը Շաբաթ օր չպատահի» (Մտ 24.20):

Շաբաթ օրը սուրբ պահելը եւ զանիկա Աստուծոյ յատկացնելը՝ աստուածային պատուիրան էր: Ուստի աղօթել որ մեր փախուստը Շաբաթ օրով չըլլայ, կը նշանակէ՝ աղօթել որ երբ Տէրը յայտնուի՝ մեզ չգտնէ պատուիրանազանց եւ Աստուծոյ յատկացուած վիճակի մէջ: «Շաբաթ» կը նշանակէ՝ հանգիստ: Տիրոջ յայտնութեան ժամանակ Դժբախ վիճակի պիտի մատնուին անոնք՝ որոնք իրենց հանգիստը չեն գտած Քրիստոսով (Մտ 11.28):

8) «Երանի՛ սգաւորներուն...»  
(Մտ 5.4):

ա) Սգաւորները անոնք են՝  
որոնք կը սգան ու կ'ողբան իրենց  
գործած մեղքերուն համար:

բ) Անոնք են՝ որոնք կը սգան  
ուրիշներուն գործած մեղքերուն  
համար, այլ խօսքով՝ արցունք կը  
թափեն մեղքի մէջ կորսուած մար-  
դոց փրկութեան համար. այդպի-  
սի մեծ սգաւոր մըն էր Ղովտը, որ  
մարդոց ապրած կեանքը տեսնե-  
լով՝ *«իբր արդար հոգիին մէջ կը  
տանջուէր ամէն օր»* (Բ.Պտ 2.8):

գ) Անոնք են՝ որոնք կը ցաւին  
Յիսուսի կրած ցաւերուն համար:

9) «Այդ օրերուն վայ է եկեր ստնտու (կաթնտու) կիներուն» (Մտ 24.19):

ա) Ստնտու կիները կը ներկայացնեն անուղղափառ վարդապետութիւններու եւ հակասուրբգրային ուսուցումներու մահացուցիչ կաթը մարդոց ջամբողները:

բ) Ստնտու կիները՝ իրենց գաւակներուն եւ ուրիշներուն չար օրինակի կաթը ջամբողներն են:

գ) Ստնտու կիները նաեւ այն մարդիկն են՝ որոնք իրենց սուտ խօսքերուն ու զրպարտութիւններուն կաթով մարդոց վնաս կը հասցնեն:

10) «Հոս գտնուողներէն ոմանք պիտի չմեռնին՝ մինչեւ տեսնեն Մարդու Որդին որ կու գայ իր թագաւորութեամբ» (Մտ 16.28):

Տիրոջ այս խօսքը լսողները բռնորն ալ մեռան: Արդ, անոնք ի՞նչ պէս տեսած եղան իր թագաւորութեան գալուստը:

ա) Գալուստը որուն մասին կը խօսի Յիսուս՝ իր այլակերպութիւնն է, երբ Քրիստոս իր թագաւորական փառքով յայտնուեցաւ եւ առաքեալներէն երեքը՝ Պետրոսը, Յակոբոսն ու Յովհաննէսը, տեսան զինք իր թագաւորական ու աստուածային փառքին մէջ:

բ) Ըստ այլոց, ակնարկություն է Պենտեկոստի օրուան, երբ մեկտեղուածները լեցուեցան Սուրբ Հոգիով եւ ճանչցան Քրիստոսը իր թագաւորական փառքին մէջ:

գ) Այլ հայրեր կ'ըսեն, թէ խօսքը կը վերաբերի Քրիստոսի մարմինին՝ եկեղեցիին, որ Քրիստոսի թագաւորութեան պատկերն է երկրի վրայ, եւ որուն տարածումը աշխարհի մէջ եւ հաստատումը մարդոց սիրտերուն մէջ՝ աշակերտները պիտի տեսնէին, եւ ատով՝ տեսած պիտի ըլլային Քրիստոսի թագաւորութեան գալուստն ու հաստատումը մարդոց կեանքին մէջ:

11) «Մի՛ կարծեք թե աշխարհին խաղաղութիւն բերելու եկայ: Ո՛չ. չեկայ խաղաղութիւն բերելու, այլ սուր» (Մտ 10.34):

Սուրը բան մը երկուքի բաժնող գործիքն է: Այս առումով, «սուր» բառին գործածութեամբ Յիսուս կը պարզէ, թէ իր ներկայութիւնը եւ խօսքերը սուրի մը նման պիտի բաժնէին իրարմէ նոյն ընտանիքի անդամները, ինչ որ խօսքին շարունակութիւնն իսկ ցոյց կու տայ. *«Եկայ զաւակը հօրմէն բաժնելու, աղջիկը՝ մօրմէն, հարսը՝ կէտուրէն»* (Մտ 10.35): Քրիստոսի քարոզութիւնը, փրկութեան հրաւեր-

ները, անխտիր բոլոր մարդիկը դրին երկրնտրանքի առջեւ. կա՛մ ընդունիլ Քրիստոսը եւ դառնալ բարեկամ իրեն ու իր հետեւորդներուն, եւ կա՛մ՝ մերժել Քրիստոսը եւ դառնալ թշնամի իրեն ու իր հետեւորդներուն:

12) «Ոչ ոք չլուացուած նոր կտոր մը կը գործածէ հին հագուստի մը համար կարկտան ընելու: Որովհետեւ նոր կտորը քաշուելով՝ հագուստը կը պատռէ, եւ անելի մեծ կ'ըլլայ պատռուածքը» (Մտ 9.16):

Նոր կտորը կը պատկերացնէ Քրիստոսի աշակերտները եւ բոլոր հետեւորդները, իսկ հին հա-

գուստը՝ Մովսէսի Օրէնքը: Տէրը  
այստեղ կը յայտնէ, թէ իրմով նոր  
կտոր դարձած, այլ խօսքով՝ նո-  
րոգութիւն ապրած ու նոր մարդ  
դարձած ռեւէ անձ չի կրնար դառ-  
նալ Մովսիսական Օրէնքին: Եթէ  
նոր կտորը, այսինքն՝ Քրիստոսով  
նորոգուած անձը, Քրիստոսով  
լուացուած չըլլայ Օրէնքի գերու-  
թենէն, այլ խօսքով՝ Օրէնքով  
փրկուելու մտածումէն, եւ փորձէ  
իբրեւ նոր կտոր՝ նոր մարդ, իր  
փրկութիւնը կարկտնել (կարել)  
Օրէնքին միջոցաւ նաեւ, այդ պա-  
րագային, պիտի կորսնցնէ թէ՛ իր  
նոր կտորը՝ փրկութիւնը, եւ թէ՛  
հին հագուստը՝ Օրէնքը:

13) «Ոչ ոք նոր գինին հին տիկերու մեջ կը լեցնէ, այլապէս տիկերը կը պայթին, գինին կը թափի, եւ տիկերը կը փճանան: Ընդհակառակը, նոր գինին նոր տիկերու մեջ կը դնեն եւ երկուքն ալ կը պահուին» (Մտ 9.17):

Տիկը այծի մորթով պատրաստուած այն պարկն էր, որուն մեջ Հրեաներ գինի կամ այլ հեղուկային նիւթեր կը դնէին: Հին տիկը կը պատկերացնէ Մովսէսի Օրէնքը, նոր գինին՝ Քրիստոսի փրկութիւնը, իսկ նոր տիկը՝ այդ փրկութիւնը ընդունած եւ նոր մարդ դարձած անհատը: Յիսուս յայտնեց իր հե-

տետրդներուն, թէ մէկը ընդունելէ ետք իր նոր գինին՝ փրկութեան Շնորհքը, եթէ վերադառնար հին տիկին՝ Մովսէսի Օրէնքին, այդ պարագային, թէ՛ տիկէրը պիտի փճանային, այսինքն՝ Մովսէսի օրէնքները պիտի կորսնցնէին իրենց զօրութիւնը իր կեանքին մէջ, եւ թէ՛ նոր գինին պիտի թափէր, այսինքն՝ պիտի կորսնցնէր իր փրկութիւնը: Հրեաներ հին տիկին (Մովսէսի Օրէնքին) մէջ կը տեսնէին իրենց փրկութիւնը: Կա՞յ կեանքիդ մէջ տիկ մը որուն մէջ կը տեսնես փրկութիւնդ: Մէկդի՛ նետէ զայն: Փրկութիւնդ Յիսուսի արեան մէ՛ջ տես միայն:

14) «Առողջները չեն որ բժիշկի պէտք ունին, այլ հիւանդները» (Մտ 9.12):

Յիսուս հեգնական ձեւով առողջ կը կոչէ Փարիսեցիները: Հիւանդները մեղաւորներն են որոնք կ'ուզեն ազատագրուիլ մեղքի իշխանութենէն, իսկ բժիշկը՝ Յիսուսը: Փարիսեցիները իրենք զիրենք հոգեւորապէս առողջ կը կարծէին: Տէրը անոնց յայտնեց, թէ իրենք՝ աշխարհ բերած իր բժշկութեան եւ փրկութեան կարիքը չունին եւ իր կարիքը չեն զգար, որովհետեւ իրենք զիրենք առողջ ու արդար կը նկատեն:

15) «Ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ զոհ» (Մտ 9.13: Ովս 6.6):

Այս բառերով Տէրը յայտնեց Փարիսեցիներուն եւ Օրէնքի ուսուցիչներուն, թէ Աստուծոյ համար աւելի կարեւոր է ողորմած ըլլալ մարդուն հանդէպ քան զոհ մատուցանել իրեն: Օրէնքին հանդէպ իրենց կոյր սէրը՝ սպաննած էր իրենց մեջ մարդուն հանդէպ ողորմած ըլլալու զգացումը: Տէրը մեզմէ ողորմութիւն կ'ուզէ եւ ոչ թէ զոհ (օրէնքներու գործադրութիւն): Կ'ուզէ որ ողորմի՛ լ գիտնանք, օգնե՛ լ ու սիրե՛ լ գիտնանք, վիրաւորին վերքերը փաթթե՛ լ գիտնանք:

16) «Չեկայ արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները» (Մտ 9.13):

Խօսքը ճշմարտապէս արդար եղողներուն մասին չէ, այլ Փարիսեցիներուն մասին, որոնք, իրենք զիրենք արդար կը համարէին եւ Քրիստոսի փրկութեան կարիքը չէին զգար: Այդպիսիներուն համար է որ Պօղոս առաքեալ կ'ըսէ, թէ *«արդարանալու իրենց հասկցած ձեւին կառչեցան եւ ուստի չընդունեցին Աստուծոյ արդարութեան ուղին»* (Հո 10.3): Զգոյշ ըլլանք: Եթէ մենք մեզ արդար կը նկատենք, պէտք է զիտնանք որ Տիրոջ փրկութեան հրաւերը մեզի համար չէ:

17) «Երանի՛ հեզերուն, որով-  
հետեւ անոնք պիտի ժառանգեն  
երկիրը» (Մտ 5.5):

ա) Հեզերը անոնք են՝ որոնք  
երբ կը լսեն Աստուծոյ խօսքին  
քարոզութիւնը, հեզութեամբ կ'ըն-  
դունին զանիկա. *«Հեզութեամբ  
ընդունեցէք ձեր սէջ սերմանուած  
Աստուծոյ խօսքը, որ կրնայ ձեր  
հոգիները փրկել»* (Յկ 1.21):

բ) Հեզերը անոնք են՝ որոնք  
Քրիստոսի լուծը կը կրեն հեզու-  
թեամբ, համաձայն Տիրոջ խօսքին.  
*«Ձեր վրայ առէք իմ լուծս եւ ինձմէ  
ստրվեցէք, որովհետեւ հեզ եմ եւ  
սրտով խոնարհ»* (Մտ 11.29): Հեզ

չեղող մարդը չ'ուզեր, չի սիրեր ու չի կրնար լուծ կրել:

գ) Հեզերը անոնք են՝ որոնք կ'անդրադառնան իրենց ոչնչութեան: Ուեւ մարդ որ կը գիտակցի թէ ինք հող ու մոխիր է, եւ թէ ոչինչ կրնայ ընել առանց Աստուծոյ օգնութեան՝ չի կրնար չհեզանալ եւ Աստուծոյ կամքին առջեւ ու անոր ձեռքին տակ չխոնարհիլ:

դ) Եթէ հզօր մարդիկ իրենք զիրենք այս աշխարհին տէրերը կը կարծեն, ապա հեզերը անոնք են՝ որոնք կը գիտակցին թէ իրենք այս աշխարհին տէրերը չեն, եւ թէ իրենք այս աշխարհին մեջ ժամանակաւոր գոյութիւն են:

18) «Ձեր վրայ առեք իմ լուծս»  
(Մտ 11.29):

Լուծը որ մեր վրայ պետք է առնենք՝ Յիսուսի փրկութիւնն է, իր արքայութեան Աւետարանն է, իր սերն է: «Առեք» ըսելով, Տէրը մեզ կը հրաւիրէ, մեր վրայ առնելու իր փրկութիւնը տարածելու լուծը, իր արքայութեան Աւետարանը հրապարակելու լուծը, իր սիրոյն տարածիչները ըլլալու լուծը: Քրիստոս «լուծ» կը կոչէ իր սերն ու փրկութեան Աւետարանը տարածելու աշխատանքը, որովհետեւ այս աշխատանքը տանող մարդուն հալածանք ու նեղութիւն կը սպասէ:

19) «Մարդու Որդին գլուխը հանգչեցնելիք տեղ մը չունի» (Մտ 8.20):

ա) Տէրը կը սորվեցնէ թէ իր հետեւորդները այս աշխարհին մէջ հանգիստ պիտի չունենան, եւ ուստի՝ պէտք չէ հանգիստ փնտռեն:

բ) Կը սորվեցնէ, թէ մենք այս աշխարհին մէջ պանդուխտներ ենք, եւ հետեւաբար, մենք մեզ հոս հաստատելու մասին պէտք չէ մտածենք:

գ) Միաժամանակ, Տէրը տխուր իրականութիւն մը կը յայտնէ, այն՝ թէ ինք չի գտներ սիրտեր ուր կրնայ իր գլուխը դնել եւ հանգչիլ:

20) «Ով որ ինձի հաւատացող այս փոքրիկներէն մէկը գայթակղեցնէ...» (Մր 9.42):

Փոքրիկները՝ նոր դարձի եկողներն են, որոնք տակաւին մանուկ են իրենց հաւատքին մէջ, եւ ժամանակի կը կարօտին որպէսզի աճին ու զօրանան իրենց հաւատքին մէջ: Տէրը կը զգուշացնէ իր հետետրոյները, որ չընեն այնպիսի բան մը՝ որ նորադարձները գայթակղին ու տկարանան իրենց հաւատքին մէջ: Պօղոս առաքեալ ինք նաեւ կը խօսի հաւատքով տկար եղողները չգայթակղեցնելու մասին (Ա.Կր 8.9-13):

21) «Աւելի լաւ կ'ըլլայ որ գայթակղեցնողին վիզին մեծ երկանաքար անցուի եւ ծովը ձգուի» (Մր 9.42):

ա) Երկանաքարը ջաղացքի այն քարն է որ կը կապուի անասունին ցորեն աղալու համար: Տէրը կը յայտնէ, թէ ով որ կը գայթակղեցնէ՝ իրենց հաւատքին մէջ տկարները՝ անասունի նման են եւ անասունի նման ալ պիտի մեռնին (Ժղ 3.19):

բ) Մէկուն վիզին շուրջ երկանաքար անցնել ու գայն ծով նետելը՝ անոր մահը կը դարձնէ անխուսափելի: Տէրը կը յայտնէ, թէ տկարը գայթակղեցնողին յաւիտենական մահը անխուսափելի է:

22) «Եթէ մէկը աջ երեսիդ ապտակ զարնէ՝ միւս երեսդ ալ դարձուր անոր» (Մտ 5.39):

Խօսքը բառացի իմաստ չունի: Յիսուս ապտակուեցաւ ու երեսը չդարձուց (Յհ 18.22-23): Պօղոս առաքեալ նաեւ ապտակուեցաւ ու երեսը չդարձուց (Գրծ 23.2-3): Խօսքին նպատակն է՝ սորվեցնել մեզի՝ չհակառակիլ չարին, փաստօրէն, Յիսուս այս խօսքը ըսելէ անմիջապէս առաջ կ'ըսէ՝ *«մի՛ հակառակիրք քեզի չարիք ընողին»*: Բայց Յիսուս ոչ միայն կը պատուիրէ չարիք ընողին չհակառակիլ, այլեւ՝ անոր բարիք ընել կը

պատուիրէ, երբ կ'ըսէ՝ «*Միւ երեսդ  
այ դարձուր անոր*»: Այո՛, մեզ ապ-  
տակողին մեր երեսը դարձնելը՝  
անոր բարիք ընել կը նշանակէ:  
Ի՞նչպէս: Հոս հոգեբանական ճրջ-  
մարտութիւն մը կայ: Յիսուս գիտէ  
որ եթէ մեր երեսը դարձնենք մեզ  
ապտակողին՝ անիկա կրնայ վատ  
զգալ, ամչնալ, եւ մեր վերաբեր-  
մունքէն ազդուելով՝ զոջալ ու  
դարձի գալ: Եւ ճիշդ այս նպատա-  
կով է որ Պօղոս առաքեալ մեզ կը  
հրաւիրէ որ չպարտուինք չարէն,  
այլ՝ բարիով յաղթենք չարին (Հո  
12.21): Երբ չարիք ընողը տեսնէ մեր  
բարին գործելը՝ կը զգաստանայ  
եւ կը փոխէ իր կեանքի ընթացքը:

23) «Եթէ ձեռքդ կամ ոտքդ քեզ կը գայթակղեցնէ՝ կտրէ ու նետէ՝ զայն...: Եթէ աչքդ քեզ կը գայթակղեցնէ՝ հանէ եւ նետէ՝ զայն» (Մտ 18.8-9):

ա) Ձեռքն ու ոտքը կտրել ու նետելը, կամ աչքը հանել ու նետելը՝ մեղքը արմատէն վերցնել կը նշանակէ: Մեր մարմինի այս անդամները կտրած, հանած ու մեզմէ հեռացուցած կ'ըլլաք՝ երբ հեռանանք ամէն բանէ որ մեզ մեղքի կ'առաջնորդէ: Կտրուած ճիւղը կը մեռնի. ուրեմն, մեր մարմինի անդամը կտրելը՝ մեղքը մեր սրտին մէջ մեռցնել կը նշանակէ:

բ) Ձեռքն ու ոտքը կտրել ու նետելը, կամ աչքը հանել ու նետելը՝ մեր անձերը մեղքի «հաճոյքներէն» զրկել կը նշանակէ:

գ) Աչքը հանելը, կամ ձեռքն ու ոտքը կտրելը՝ ցաւ կը պատճառէ: Ուրեմն, երբ Յիսուս կը խօսի մեր աչքը հանելու, մեր ձեռքն ու ոտքը կտրելու մասին, խորքին մէջ, մեզ կը հրաւիրէ որ պատրաստ ըլլանք ցաւ քաշելու, միայն թէ չիյնանք մեղքի մէջ: Պօղոս առաքեալ քայլ մը աւելի առաջ կ'երթայ: Ան կը պատուիրէ արեան իսկ գնով դէմ դնել մեղքին. *«Ձեր արիւնը թափելու չափ դիմադրութիւն ցոյց չտուիք մեղքի դէմ»* (Եբր 12.4):

24) «...Աւելի լաւ է մէկ ձեռքով կամ կաղ մտնել կեանքը, քան թէ երկու ձեռք եւ երկու ոտք ունենալ եւ իյնալ յաւիտենական կրակին մէջ: ... Աւելի լաւ է միականի մտնել կեանք, քան թէ երկու աչք ունենալ եւ իյնալ դժոխքի կրակին մէջ» (Մտ 18.8-9):

ա) Վերեւ ըսի, թէ մարմինի մէկ անդամը կտրելը մե՛ծ ցաւ կը պատճառէ: Այս առումով, երբ Տէրը կ'ըսէ թէ *աւելի լաւ է մէկ ձեռքով, կաղ ու միականի մտնել կեանքը*, ըսել կ'ուզէ, թէ *աւելի լաւ է ցաւ կրել ու արքայութիւն մտնել, քան թէ բնաւ ցաւ չքաշել եւ նետուիլ*

դժոխքի կրակին մեջ ուր ցաւը սաստիկ ու անվերջ է:

բ) Դարձեալ, վերեւ ըսի, ձեռքն ու ոտքը կտրել ու նետելը, կամ աչքը հանել ու նետելը՝ մեր անձերը մեղքի «հաճոյքներէն» զրկել կը նշանակէ: Այս առումով, երբ Տէրը կ'ըսէ, թէ *աւելի լաւ է մէկ ձեռքով, կաղ ու միականի մտնել կեանքը*, ըսել կ'ուզէ, թէ *աւելի լաւ է զրկանք կրել ու արքայութիւն մտնել, քան թէ երկու ձեռք, երկու ոտք եւ երկու աչք ունենալ եւ իյնալ դժոխքի կրակին մեջ*, այսինքն՝ քան թէ ունենալ մեր աչքի, ոտքի, ձեռքի ու սրտի բոլոր ուզածները, եւ իյնալ դժոխքի կրակներուն մեջ: